Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով 23.06.2021թ. կայացված ԱՖ666883 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<28>>07 2021թ. 7-13-11461 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով քաղաքացի Հովհաննես Բոլիբեկյանի ՄԴ/59247-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի, Մաշտոցի պողոտայի, 9-րդ շենքի, 2-րդ բնակարանի բնակիչ Հովհաննես Բոլիբեկյանը դիմումով խնդրել է բեկանել 23.06.2021թ. կայացված ԱՖ666883 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ դիմումը քննեն առանց իր ներկայության ավելացնելու ոչինչ չունի և խնդրել է արդյունքների մասին տալ գրավոր պատասխան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 23.06.2021թ. կայացված ԱՖ666883 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 69-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնակավայրերից դուրս երթևեկությունը թույլատրվում է՝ 90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ թեթև մարդատար ավտոմոբիլներով և 3,5 տ ոչ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներով (110 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ ավտոմայրուղիներով) :

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ 23.06.2021թ. ժամը՝ 15:35-ի սահմաններում Երևան-Սևան-Իջևան ավտոճանապարհի 65-րդ կմ-ի հատվածում դիմումատուի կողմից վարած <<MERCEDES>> մակնիշի 10GM055 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի, 4-րդ սպայական վաշտի, 1-ին սպայական դասակի տեսուչ, ոստիկանության կապիտան Դ.Գալոյանի և նույն դասակի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ս.Ղարիբյանի կողմից՝ ՃԵԿ-ի խախտման համար, այն է, որ վարորդը բնակավայրից դուրս՝ ավտոմոբիլով երթևեկել է 121 կմ/ժ արագությամբ, որտեղ թույլատրելի առավելագույն արագությունը սահմանված է 90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ, այսինքն հաշվանցելով հնարավոր սխալանքի 10կմ/ժ-ը, գերազանցել է թույլատրելի արագությունը 21կմ/ժ-ով: Վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-ին մասով կայացվել է ԱՖ666883 որոշումը՝ Հովհաննես Բոլիբեկյանին 20.000 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին: Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն՝ իրավախախտումը հայտնաբերվել է ծառայողական ավտոմոբիլում տեղադրված

<<ԲԻՆԱՐ>> տեսակի 4697 գործարանային համարի արագության ռադիոլոկացիոն չափիչ սարքի միջոցով, որից հետո սահմանված կարգով, ավտոմոբիլը կանգնեցվել է, ոստիկանության ծառայող Դ.Գալոյանը մոտեցել է վարորդին, ներկայացել, պարզաբանել իրավախախտման բնույթը և պահանջել փաստաթղթերը: Նախքան արձանագրություն կազմելը, վարորդին առաջարկվել է դիտել իրավախախտման տեսանյութը, վերջինիս հրաժարվել է դիտել, որից հետո ծանոթացել է արձանագրության բովանդակությանը չի ստորագրել չի ստացել որոշման պատճենը և կատարման մասին քաղվածքը: Ճանապարհային ոստիկանության ծառայողները ներկայացրել են, ստուգաչափման վկայականը N035670, որի ֆիքսած արագությունը չի կարող սխալ լինել քանի, որ արագաչափ սարքը ստուգաչափվել է 16.09.2020թ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>>ՓԲԸ-ի կողմից և ուժի մեջ է մինչև 16.09.2021թ

Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը պարտավոր է սույն հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով ազդանշան տալով կանգնեցնել տրանսպորտային միջոցը, եթե՝ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, կամ տրանսպորտային միջոցի ընթացքը կամ տեղափոխվող բեռը, կամ վարորդը կամ ուղևորներն իրենց վարքագծով ակնհայտորեն վտանգ են ստեղծում երթևեկության անվտանգության համար: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշները իսկ ԱՖ666883 որոշումն օրինական է և հիմնավոր, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 23.06.2021թ. կայացված ԱՖ666883 որոշումը թողել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հովհաննես Բոլիբեկյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Գ.Հրաչյան
Հեռ. 011-544-783

ԱՖ 666883

A B C D E

ԱՖ 666883

A B C D E

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԿՈՒՅԱԿԱՆ

A B C D E ԱՖ